18.04.25 - 18.04.25
15:00
Անցանց
Գրանցումը փակ է
☐

Պահպանել Google օրացույցում

Ս.թ. ապրիլի 18-ին՝ ժամը 15:00-ին, ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետում տեղի կունենա «Հոգեբանական վերնիսաժ» գիտագործնական միջոցառումը, որի նպատակն է հոգեբանության ոլորտի կիրառական կենտրոնների և կրթական հաստատությունների միջև ստեղծել սերտ համագործակցություն, նպաստել աշխատաշուկայի զարգացմանը և ուսանողների մասնագիտական աճին։

Միջոցառումը կանցկացվի տաղավարային էքսպոյի ձևաչափով, որի շրջանակում յուրաքանչյուր մասնակից ինքն է որոշում իր մասնակցության ազատ ձևը։

Էքսպոյին կմասնակցեն ինչպես հոգեբանական կենտրոններ, այնպես էլ կրթական հաստատություններ։

Հոգեբանական կենտրոնները էքսպոյի շրջանակում կներկայացնեն ծառայությունների մատուցման ուղղությունները, աշխատանքի և կամավորության հնարավորությունները, մասնագիտական մոտեցումները և այլն։

Կրթական հաստատությունները կներկայացնեն հոգեբանական կրթական ծրագրեր, վերապատրաստումների, գիտագործնական սեմինարների, գիտաժողովների վերաբերյալ տեղեկություններ և այլ մանրամասներ։

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000
info@ysu.am